

ԱՆՈՒՇ ԱՊՐԵՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՄՄ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ԵՒ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ՏԵՍԱԿԱՆ-ՍՏԵՂՈՍԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Միջնադարեան հայ գրչաշխարհում Գրիգոր Նարեկացուց յետոյ Ներսէս Շնորհալու երկերն են մեծապէս ընդօրինակուել ու տարածուել: Այդ ընդօրինակութիւնից շատերը մեզ են հասել արժէքաւոր յիշատակարանների միջոցով: Ընդօրինակող գրիչների արձակ ու չափածոյ տողերը, պատմիչների ճոխ ու պերճախօս բնորոշումները՝ «սուրբ եւ երանելի վարդապետ», «տիեզերական վարդապետ», «վարդապետ Հայոց», «իմաստուն», «Երկրորդ Լուսաւորիչ», «տիեզերալոյս», վկայութիւնն են այդ հեղինակների ժողովրդականութեան ու նրանց երկերի նկատմամբ հետաքրքրութեան²: Իսկ հեղինակների կեանքի ու գործունէութեան ամենաբարձր գնահատականի արտայայտութիւնը նրանց ժամանակակիցների ստեղծած վարքերն են ու այն բազմաթիւ, բազմասեռ գրուածքները, որոնք լուսաւորում են Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու բազմանշանակ կեանքի գրեթէ բոլոր կողմերը:

¹* Ստացուել է՝ 3.05.2024, գրախօսուել է՝ 3.06.2024: Էլ. հասցէ՝ apresiananush@gmail.com:

² Գրիգոր Նարեկացուն Վասիլ Ուռհայեցի գրիչը բնորոշել է. «Շնորհիւ ամենախնամ ողորմութեանն Աստուծոյ յանկ ելեալ աւարտեցաւ Մատեանն աստուածային սուրբ եւ երանեալ վարդապետին Գրիգորի Նարեկացու», տէս ՄՄ ձեռ. Հմբ 4965, թ. 380ա–բ, Սամուէլ Անեցին՝ «փայլէր իբրեւ զարեգակն սուրբն Գրիգոր Նարեկացին», տէս Սամուէլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103, Արիստակէս Լաստիվերցին՝ «...եւ Գրիգոր յոյժ իմաստունն բանիւք», տէս Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցույ, աշխատասիրութեամբ Կ. ԵՈՒԶԲԱՇԵԱՆԻ, Երեւան, 1963, էջ 26, 154: Այս մասին մանրամասն տէս նաեւ Ա. ՂԱԶԻՆԵԱՆ, Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս–Լիբանան, 1995, էջ 29–39: Կիրակոս Գանձակեցին Ներսէս Շնորհալուն բնորոշում է. «Այս Ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան զյոյզովս ի ժամանակի անդ ոչ միայն քան զվարդապետս Հայոց, այլեւ քան զյունաց եւ յասորոց, այնքան՝ մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս...», տէս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. ՄԵԼԻՔ-ՕԶԱՆՋԱՆԵԱՆԻ, Երեւան, 1961, էջ 118: Այս մասին մանրամասն տէս նաեւ Շ. ՆԱԶԱՐԵԱՆ, «Ներսէս Շնորհալու կերպարը միջնադարեան գեղարուեստական գրականութեան մէջ», «Ներսէս Շնորհալի» (յօդուածների ժողովածու), Երեւան, 1977, էջ 67–87:

Թէ՛ Գրիգոր Նարեկացու, թէ՛ Ներսէս Շնորհալու գրական ժառանգութիւնը առանձին—առանձին հիմնաւոր քննութեան է արժանացել, այդուհանդերձ նրանց ստեղծագործական առնչութիւնների ուսումնասիրութեանը քիչ ուշադրութիւն է սեւեռուել: Արժանայիշատակ են Ղեւոնդ Արիշանի «Շնորհալի եւ Պարագայ իւր»³, Նիկողոս Թահմիզեանի «Ներսէս Շնորհալին երգահան եւ երաժիշտ»⁴, Արշակ Մադոյեանի «Միջնադարեան հայկական պոէմը (ԺԱ.—ԺԶ. դարեր)»⁵, Հրաչեայ Թամրազեանի «Գրիգոր Նարեկացին եւ Կիլիկիայի բանաստեղծական արուեստի դպրոցը»⁶ ուսումնասիրութիւնները եւ այլ հեղինակների մի քանի յօդուածները⁷:

Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու ստեղծագործական նմանութիւնները բացայայտելու համար կարելոր է նրանց ներկայացնել Նարեկեան եւ Կիլիկեան դպրոցների առնչութեան համապատկերում: Նախկեան դպրոցի (Ժ.—ԺԱ. դարեր) նշանաւոր ներկայացուցիչներն են խոսրով Անձեւացին, Անանիա Նարեկացին եւ Գրիգոր Նարեկացին: Նարեկեան դպրոցի շարունակութիւնը գրական նոր միջավայրում Կիլիկիայի դպրոցն է (ԺԲ.—ԺԳ. դարեր)⁸ իր նշանաւոր մատենագիրներով՝ Ներսէս Շնորհալի, Գրիգոր Տղայ, Ներսէս Լամբրոնացի:

Նարեկեան դպրոցի ներկայացուցիչների երկերի առաջին համախմբողը Կիլիկեան դպրոցի հիմնադիրներից Գրիգոր Փոքր Վկայասէր կաթողիկոսն է: Նա ստեղծել է ժամանակի լաւագոյն մատենադարաններից մէկը՝ մէկտեղելով ցրուած ձեռագրերն ու մատենագրական ժառանգութիւնը: Նշանակում է, որ ԺԲ. դարում Նարեկեան դպրոցի մատենագիրների երկերը Կիլիկիայի մատենադարաններում էին եւ կարելորութիւն ունէին դպրոցի հոգեւոր, գիտական ոլորտում: Դրա վկայութիւնն է Անանիա Նարեկացու հեղինակութիւնը Կիլիկիայի դպրոցում, որի մասին բազմաթիւ անդրադարձներ կան Ներսէս Շնորհալու թղթերում. «Զգիրս երանույն Անանիա Նարեկացույ վարդապետի, որ ընդդէմ անիծելոյն Սմբատայ, անթերի ունի զայսոսիկ պատասխանի»⁸, ինչպէս նաեւ Գրիգոր Նարեկացուն վերաբերող առաջին յիշատակումը Վարդան Հայկազնի «Տաղ Գե-

³ Վենետիկ, 1873:

⁴ Երեւան, 1973:

⁵ Երեւան, 1985:

⁶ Երեւան, 2007:

⁷ Տե՛ս «Ներսէս Շնորհալի» (յօդուածների ժողովածու):

⁸ «Հնդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյն», Երուսաղէմ, 1871, էջ 269:

րեզմանական վասն փոխման երանեալ եւ սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի» երկում՝ պահպանուած Մաշտոցեան Մատենադարանի Հ^մ 2496 ձեռագրում. «...Կամ հոմանունն իւր սփանչելի / Փիլիսոփայն Նարեկացի / Զայն հանճարեղսն ես ուզէի / Եւ ինձ ի յաւգն կոչէի»⁹։ Ակնյայտ է, որ Նարեկեան դպրոցի մատենագիրների ու յատկապէս Գրիգոր Նարեկացու անունը յայտնի է դարձել նախ եւ առաջ Կիլիկեան Հայաստանում (ԺԲ. դար), որտեղ նա արդէն սփանչելի, հանճարեղ, փիլիսոփայ բանաստեղծ էր։

Նարեկեան եւ Կիլիկեան դպրոցները մեզ են ներկայանում ինչպէս գրական երկու ընտանիքների ստեղծագործական ժառանգութեան սերտ կապերի¹⁰, այնպէս եւ նրանց երկերի տեսական ու ստեղծագործական ընդհանրութիւնների տեսանկիւնից։ Կիլիկեան դպրոցի երեք նշանաւոր ներկայացուցիչները խոր առնչութիւններ ունեն Գրիգոր Նարեկացու հետ։ Գրիգոր Նարեկացի եւ Ներսէս Լամբրոնացի առնչութեան առհաւատչեան Ներսէս Լամբրոնացու հեղինակած Նարեկացու վարքն է՝ հնագոյնը պահպանուածներից (1173), որը տեղ է գտել «Մատեան ողբերգութեան» երկի՝ Լամբրոնացու պատուիրած օրինակում¹¹։ Իսկ 1177 թուականին գրուած իր առաջին ծաւալուն մեկնութեան մէջ՝ «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին», Լամբրոնացին մեկնել է «Մատեան»-ի ԼԳ. աղօթքը¹², որը նրա օրօք արդէն ներմուծուել է պատարագի արարողակարգի մէջ։ Այս կերպ Գրիգոր Նարեկացու վարքն ու Սուրբ Հոգուն նուիրուած աղօթքի մեկնութիւնը դարձել են կարեւոր սկզբնաղբիւր՝ Նարեկացու սրբացման եւ Հայ Եկեղեցու սրբերի շարքը մուտք գործելու համար՝ նախանշելով «Մատեան»-ի հետագայ ընդօրինակումն ու տարածումը։ Գրիգոր Նարեկացի եւ Գրիգոր Տղայ առնչութիւնն ի յայտ է գալիս «Մատեան ողբերգութեան» եւ «Վասն մեղացն չարշարանաց» երկերի՝ յատկապէս նորպատոնական բարոյագիտութեան հետ ունեցած ընդհան-

⁹ ՄՄ ձեռ. Հ^մ 2496, թ. 326ա։

¹⁰ Նարեկեան դպրոցի մատենագիր Խոսրով Անձեւացին Գրիգոր Նարեկացու հայրն էր, Անանիա Նարեկացին՝ Նարեկավանքի վանահայրն ու վարդապետը՝ Նարեկացու մօրեղբայրը։ Կիլիկիայի դպրոցի հետեւորդ Ներսէս Շնորհալին Գրիգոր Տղայի հօրեղբայրն էր, Ներսէս Շնորհալին՝ Ներսէս Լամբրոնացու զարմիրը։ Այս մասին մանրամասն տես Հ. ԹԱՄՐԱՋԵԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ Կիլիկիայի բանաստեղծական արուեստի դպրոցը, էջ 8։

¹¹ ՄՄ ձեռ. Հ^մ 1568, թ. 119ա-բ։

¹² ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, Ս. Դավար, 1847, էջ 195–197, 250–260։

րութիւններում¹³. «Պարտիս յողորմութենէ, եւ ոչ պարսաւիս, / Բռնադատիս ի մարդասիրութենէ, եւ ոչ անգոսնիս, / Հարկիս ի բարութենէ, եւ ոչ հայհոյիս, / Ստիպիս ի սիրոյ, եւ ոչ բամբասիս, / Պաղատիս դարձին իմ առ քեզ, եւ ոչ ձանձրանաս, / Արագես զկնի ապերասանիս, եւ ոչ լքանիս, / Զայնես շտողիս, եւ ոչ սրտմտիս, / Փութաս մեղկելոյս, եւ ոչ խափանիս» («Մատեան», Բան ԾԼ., էջ 474) // «Ոչ արգելուս զողորմութիւնս քո՝ / Զի խնայես յիս իրաւացի / Ոչ դատես իբրեւ զգող՝ / Զի յանդգնեցոյց զիս ցաւս / Ոչ ամաչեցուցանես իբրեւ զլիրբ՝ / Զի բժիշկ ես ճշմարիտ / Վայ ինձ, եղկելոյս, զի մեղկացայ մեղօք / Վայ ինձ, տարամերժելոյս...»¹⁴: Այս զուգահեռ օրինակներում Աստծուն տրուած էական յատկանիշների միջոցով հեղինակները շեշտել են Սուրբ Հոգու մասնակցութիւնն իրենց երկերի ստեղծմանը, իսկ հակադրութիւնների միջոցով ցոյց տուել Բարձրեալի հետ անմիջնորդ կապի ու միաւորուելու կարեւորութիւնը¹⁵:

Նարեկեան եւ Կիլիկեան դպրոցների համապատկերում առուել ակնառու են Գրիգոր Նարեկացի եւ Ներսէս Շնորհալի ընդհանրութիւնները՝ արեւելաքրիստոնէական գաղտնուսում (μυστικός, μυστικισμός) գաղափարների, բովանդակային ու խորագրային նմանութիւնների, բանաստեղծական արուեստի էական յատկանիշների տեսանկիւնից:

Ա. ԱՐԵՒԵԼԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԳԱՂՏՆՈՒՍՄԱՆ

ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու երկերում կարեւորում է մարդու հոգեւոր կատարելագործման ընթացքը (նեւբիմ եւ աւտաբիմ մարդ, հոգեւոր կենցաղավարութիւն, աղօթք, զղջման ու աւտասուելու շնորհ, աստուածամանութիւն), որն արդէն արտայայտուած էր նախորդների գործերում¹⁶:

¹³ Գրիգոր Նարեկացի—Գրիգոր Տղայ առնչութիւնների մասին տես Ա. ՄԱԳՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 43–49, Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ Կիլիկիայի բանաստեղծական արուեստի դպրոցը, էջ 123–158, Հ. ԳՐԻԳՈՅԵԱՆ, Նարեկացիական հետազոտութիւններ, Երեւան, 2010, էջ 96–114:

¹⁴ Տես Հատընտիր հայ հին բանաստեղծութեան, աշխատասիրութեամբ՝ Զ. ԳԱԶԱՆՃԵԱՆՆԻ, հտ. Ա., Վենետիկ — Ս. Ղազար, 1998, էջ 534:

¹⁵ Այս մասին մանրամասն տես Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ նորալատոնականութիւնը, Երեւան, 2004, էջ 189–207:

¹⁶ Այս մասին մանրամասն տես Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ, Նարեկեան դպրոցը, Երեւան, 1999, էջ 113–180, Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ նորալատոնականութիւնը, Երեւան,

խորհրդոյն սպասաւորեսցէ...»¹⁹ // «Աղաղակեմ ըստ ախտակրին՝ / դիր դեղ խոցոյս հոգոյս ներքին / Յաշաց զախտից փոշին / մաքրեա՛ գներքինն եւ զարտաքինն»²⁰:

Արտաքին եւ ներքին մարդուն զուգահեռ նարեկացու եւ Շնորհալու երկերում հիմ եւ նոր մարդու գաղափարն է: Հին մարդը խորհրդանշում է մեղքերը, վատ սովորոյթները՝ գոռոզամտութիւնը, նախանձը, չարութիւնը, հպարտութիւնը եւ զուգահեռ նախանշում է նոր մարդը՝ ազատուած մեղքերից. «Ընդ հին չարութեանցն նորոգ ինքնաստեղծութիւնս գտի» («Մատեան», Բան Ի., էջ 322) // «Արդարեւ, մեղք եւ անաւրէնութիւնք իմ յիս, / Եւ ես մաշիմ ի նոսին, ըստ մարգարէին, / Որ ի դիմաց պարտաւորացն բանի, / Եւ տէրունական առակին հիմ տկոցն եւ նոր գինոյն»²¹ («Մատեան», Բան ԿԲ., էջ 493) // «...նախ մաքրեսցի իւրաքանչիւր ոք խոստովանութեամբ յանմաքուր խորհրդոց եւ գործոց եւ պատարագ կենդանի զինքն մատուցէ կենդանւոյն Աստուծոյ՝ առաքինութեամբ եւ ապա ի մաքուրն մերձեսցի եւ սրբութեան սրբոցն սպասաւորեսցէ, զի մի՛ ըստ նմանութեան նոցա, տանջողական հրովն այրեսցի ներքին մարդն, աստ խղճիւ մտաց եւ անդ բոցովն անշիջանելեալ...» («Թուղթ ընդհանրական», էջ 75):

բ. «Զղջման եւ արտասուաց շնորհ»-ը²². Հստ Գրիգոր նարեկացու՝ աղօթքի ժամանակ կարեւորում է ներքին եւ արտաքին մարդու ներդաշնակութիւնը: «Մատեան»-ում աղօթքի արտաքին՝ նկարագրութիւնը ներհիւսուած է ներքին՝ հոգեկան ապրումներին. «Ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս, երկամանցս, լեզուիս եւ շրթանցս ձայնարկութեամբ...» («Մատեան», Բան ԴԳ., էջ 625): Աղօթարարը ձուլւում է աղօթքի խօսքերին, նոյնանում հեղինակի հետ, եւ անկեղծութեամբ հաղորդակցումն Աստուծոյ հետ նրան դարձնում է «անընդմիջելի մեծաւոր» («Մատեան», Բան ԻԳ., էջ 331)՝ հասցնելով նրան արտասուելու շնորհին:

¹⁹ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ ընդհանրական, աշխատասիրութեամբ՝ է. ԲԱՂԳԱՍԱՐԵԱՆՍԻ, Երեւան, 1995, էջ 123 (այսուհետեւ՝ «Թուղթ ընդհանրական»):

²⁰ Տէն ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Յիսուս Որդի, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., Երեւան, 2018, էջ 353–354 (այսուհետեւ՝ «Յիսուս Որդի» եւ էջը):

²¹ Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ տիկքն պատառին եւ գինին հեղու, եւ տիկքն կորնչին, այլ արկանեն զգինի նոր ի տիկս նորս, եւ երկոքին պահին (տէն Մատթ. Թ. 17):

²² «Զղջման ու արտասուաց շնորհ»-ը Անանիա Նարեկացու ձեւակերպումն է, որը նրա բարոյագիտութեան ու գեղագիտութեան հիմքում է, տէն ՄՄ ձեռ. Հ⁹⁹ 6953, Թ. 266ա, Հ.Ր. ԹԱՄՐԱՋԵԱՆ, Անանիա Նարեկացի, Երեւան, 1986, էջ 296–298:

Նարեկեան դպրոցի ներկայացուցիչները նշում են, որ բանաստեղծությունը այդպիսի յուզական ու զղջական պատկերներով պիտի լինի, որպէսզի կարողանայ ազդել մարդու սրտի վրայ եւ արտասուք քամել՝ «...զղջման բանս եւ աւրինակ ած զմտաւ, զի սիրտդ ի զղջումն գայ եւ արտասուս բղխէ»²³։ Արտասուելու շնորհը աղօթողին զգացմունքայնութեան է հասցնում, ապա՝ ներքին պայծառութեան, լուսազեղութեան։ Այս ճանապարհով մարդը մօտենում է Աստծոյ պատկերին. «Դարձեալ՝ յորժամ պատահին միմեանց տեարք այգեաց, կրօնաւորք յայլ եւ յայլ տեղեաց, յետ ողջունին զողջութենէ հոգւոց հարցանեն եւ զհիւանդութեանց ախտից, եւ ոչ զպատերազմաց դիւաց եւ զխաղաղութեանց, եւ ոչ թէ՛ զիւրդ ստասցուք շնորհս արտասուաց՝ ի ժամ աղօթելոյն...» («Թուղթ ընդհանրական», էջ 81)։

գ. Աստուածամանուկին. Աստուածամանութեան դրոյթներով Նարեկացին եւ Շնորհալին դարձեալ մօտենում են իրար։ Աստուածամանութեան գաղափարը նոյնպէս ծագել է Պլատոնի փիլիսոփայական սահմանումներէ, փոխանցուել Դաւիթ Անյաղթին եւ Դիոնիսիոս Արէոպագացու անունով յայտնի երկերի հեղինակին, այնուհետեւ՝ Նարեկեան ու Կիլիկեան դպրոցին։ Նարեկացու եւ Շնորհալու երկերում արտայայտուած է նորպլատոնական եւ քրիստոնէական բարոյագիտութեան հիմնադրոյթներէ մէկը, համաձայն որի՝ մարդու հոգեւոր կատարելագործման հիմնական նպատակը աստուածամանութեան ձգտելն է՝ ըստ մարդկային կարողութեան. «Որքան մարդ է զմարդն Աստուծոյ՝ Աստուծոյ նմանեցուցանել» («Մատեան», Բան ՀԱ., էջ 527) // «Յորում հեծեալ դարձայց զգերեալ ազգըս մարդկան, / Զորեքդիմի կառացըն տիպ է եւ նման // Զի ճշմարիտ տըլող կենաց Աստուածն Բան, / Աստ հանգուցեալ յեղաշրջեաց գոլ իւր նըման» («Յիսուս Որդի», էջ 541, 543)։

Գրիգոր Նարեկացուց է սերել նաեւ Ներսէս Շնորհալու լուսերգութիւնը։ Նրանց երկերի բազմաթիւ յիշատակումներում լոյսը գոյաբանական նշանակութիւն ունի, այն աստուածային սիրոյ մարմնաւորումն է. «Հայեաց ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ» («Մատեան», Բան ԺԸ., էջ 311) // «Քանզի ոչ երբէք ստուերացուցանէ / Զլոյս ողորմութեան Քոյ խաւար սրտմտութեան» («Մատեան», Բան ԺԶ., էջ 303) // «Վասն որոյ՝ աղաչեմ զամենեւեան մի նուագութեամբ իւղոյ ողորմութեան եւ սրբու-

²³ Տէս ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2680, Թ. 309բ։

թեան աղօտացուցանէք զլոյս հաւատոյ լապտերաց ձերոց, այլ անշիջանելի պահեցէք զճառագայթս աստուածութեան մըշտավառ առաքինութեամբ յանձինս ձեր» («Թուղթ ընդհանրական», էջ 75), «Լոյս ի լուսոյ Հաւր միածին, / լուսով լցեր զազգ երկրածին, / Եւ զաշակերտս լուսոյ Բանին / լոյս ասացեր անուամբ Քոյին» («Յիսուս Որդի», էջ 351–352):

Բ. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ, ԽՈՐԱԳՐԱՅԻՆ ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Գրիգոր Նարեկացին եւ Ներսէս Շնորհալին իրենց երկերի սկզբում եւ վերջում անդրադարձել են դրանց ստեղծման նպատակին, նշանակութեանն ու պատճառներին:

Ամենաակնառուն այդ երկերի ստեղծման յարակալութեան նպատակն է: «Մատեան»-ն աստուածային ներշնչանքով գրուած երկ է, աստուածաշունչ մատեան, որ ստեղծուել է հեղինակի ու ընթերցողների խորհրդաւոր կապի, մարդկանց ու Աստծոյ միջեւ յաւիտենական միջնորդի գաղափարով²⁴. «Եւ քանզի անդառնալի ուղւոյն յիշատակ / Աստեացս պարտեաց զայս կտակ թողի՝ որոց ընթեռնուն, / Իմովս բանիւ առ Աստուած կարդալ հանապազորդութեամբ...» («Մատեան», Բան ԾԴ., էջ 461): Նոյնն է Շնորհալու «Յիսուս Որդի» երկի մտայղացման՝ գրքի՝ իբրեւ Աստծոյ եւ մարդկանց միջեւ միջնորդի գաղափարը, որը յիշատակում է երկի վերջում, յիշատակարանում եւ խորագրերում («Տեառն Ներսէսի Շնորհալոյ ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց» // «Տեառն Ներսէսի նուէր մաղթանաց ներշնչական տաղիւ տուողին բանից ըղձումն աղաւթից ներանձնական հոգւոց զարթուցելոց մտաւք ի թմբրութենէ կրից յիշատակաւ անցելումն իրի ներկայի եւ ապագայի ողբումն հեծութեան սրտի խաւսք ընդ Աստուծոյ» («Յիսուս Որդի», էջ 291):

Նարեկացու եւ Շնորհալու երկերը համընկնում են նաեւ իրենց նշանակութեամբ՝ դրանցով աղօթողները բժշկուելու են մեղքերից, աղերսողներն ու մաղթողներն արժանանալու են փրկութեան. «Եւ արասցէս լինել դեղ կենաց / Առ հնարս ցաւոց հոգւոց եւ մարմնոց Քոց ստեղծուածոց / Զայս կարգեալ սահման ողբոց մատենի» («Մատեան», Բան Գ., էջ 258) // «Եւ մանաւանդ զիս յիշողին / Եւ թողութիւն ինձ խնդրողին, / Բարեբարոյ ընթերցողին / զմիտս բանիցն քննողին, / Ողորմութեանց պարգեւք տացին...»

²⁴ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ Կիրիկիայի բանաստեղծական արուեստի դպրոցը, էջ 102–111:

(«Յիսուս Որդի», էջ 448): «Մատեան»-ի վերջում երկի յղացման գաղափարն է: Նարեկացու մեկնիչի բնորոշմամբ՝ գանձարանն Աստծոյ անմոռաց յիշողութիւնն է, որտեղ հեղինակը պահում է իր սրտի խորքերից պեղուած գանձերը, որպէսզի ուրիշների աղօթելուց, որոնք «Մատեան»-ով պիտի աղօթեն, աղօթած ու փրկուած համարուի նաեւ ինքը²⁵. «Եւ գրեալ դրոշմեսցեն յարձան յաւիտեան / Ընդ հաճոյականացն սպասաւորութիւնս // Կացցէ առաջի Քո մշտնջենաւոր» («Մատեան», Բան 2Ը., էջ 598): Վերջինս նոյնանում է Շնորհալու տողերի հետ. «Ի յընթեռնուլն աշխատեսցին / Եւ յաղաւթելն տաժանին, / Շնորհեա՛նոցա զաղաւթելին...» // «Եւ հաւասար, զամէնէսին, Տէր իմ, յիշեա՛յ յարըն վերջին...» («Յիսուս Որդի», էջ 447, 448):

բ. Ակնյայտ նմանութիւններ են ի յայտ գալիս «Մատեան»-ի նախաբան «Դրութիւնք»-ի եւ «Յիսուս Որդի» երկի պահպանուած խորագրերում՝ «Դրութիւնք յոգնաթախանձ բանից աւգտակարաց... / Առիթք արտասուաց, պատճառ աղաւթից՝ / Ի խնդրոյ հայցման / Հարց միանձանց եւ բազմաց անապատականաց / Ասացեալ Մատեան ողբերգութեան / Գրիգորի Նարեկայ Վանից Վանականի» («Մատեան», էջ 245) // «Տեառն Ներսէսի Շնորհալոյ ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց» («Յիսուս Որդի», էջ 291) // «Տեառն Ներսէսի նուէր մաղթանաց ներշնչական տաղիւ տուողին բանից ըղձումն աղաւթից ներանձնական հոգւոց զարթուցելոց մտաւք ի թմբբութենէ կրից յիշատակաւ անցելումն իրի ներկայի եւ ապագայի ողբումն հեծութեան սրտի խաւաք ընդ Աստուծոյ» («Յիսուս Որդի», էջ 291): «Յիսուս Որդի» երկում եւս կրկնում է աղօթքի՝ սրտի խորքերից դուրս գալու պատկերը. «Եւ ես գոչեմ ձայնիւ նորին, / Անշարժ շրթամբք խորոց սրտին, / Աղաղակեմ անլուելի, / Հեծեմ հոգւովս վշտագին» («Յիսուս Որդի», էջ 322), որով սկսում են Նարեկացու «Մատեան»-ի Բաները. «Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի. ի խորոց սրտի խաւաք ընդ Աստուծոյ»²⁶:

²⁵ ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետին, Կոստանդնուպօլիս, 1745, էջ ՈԾԱ.:

²⁶ Այլ վերնագրեր ունեն «Մատեան»-ի ՀԵ., ՂԲ., ՂԳ. գլուխները: ՀԵ. գլուխը վերնագրուած է՝ «Դարձեալ առ նմին կրկնապատիկ Երրորդութիւն աստուածային Հոգւովն ազդեցեալ, որ ինչ յառաքելոցն սահմանեցաւ աւանդութիւն՝ առ ամենայն լուսաւորութիւն Եկեղեցւոյ դաւանութեան՝ մեկնապէս եղեալ աստանաւր: Եւ որ առ անշնչականս նիւթեղէն՝ ցուցանէ երանաւոր կերպաղբութիւն անճառելի», ՂԲ. գլուխը՝ «Ի փայտն երջանիկ բարբառստութեան ժամահարին խորհրդածութեան, աղաչանս եղեալ ընդ կերպարանս թարգմանութեանն», իսկ ՂԳ. գլուխը՝ «Աղաւթք թարգմանաւրէն վասն սրբալոյս իւղոյն միւռոնի»:

գ. Բովանդակութեան, պատկերի, ձեւի, տաղաչափութեան, յարակրկնութեան նմանութիւններն ու ազդեցութիւնները ակնառու են Նարեկացու եւ Շնորհալու տաղերում ու փոխերում²⁷: Շնորհալու «Առաւաւտին շաւղին...» տաղը գրուած է Նարեկացու «Տաղ յարութեան»-ի նմանողութեամբ՝ յօրինուած «Սէր յառաւօտէն ճեմեալ...» սկզբնատողով. «Սէր յառաւաւտէն ճեմեալ / Իւր անձուկ ծագմամբ / Ծագմանն արեւելք, / Ծագմանն արեւելք անուն... // Կամ սիրոյ շրջան առեալ, / Աստեղբ բոլորեալ // Ի զարդ շաւղից փայլեալ / Ոսկէթել շողից // Շող երփն առ երփին փողով / Հովիտ շուշանի...»²⁸ // «Առաւաւտին շաւղին / Շող ծագեալ, արեւ տարածեալ, / Արեւ, ը՛, բարձր իջեալ / Արփենույն արփույն տարփումամբ, / Արփենույն, ը՛, տարփումամբ անդ, / Ը՛, քաղցրիկ ցաւիկ արկանէր, / Յաւդ ի Հերմոնէ իջեալ / Ի վերայ լեռին սիրայնոյ, / Լերին. ը՛, սիրայնոյ սէր / Ի սրնունդ հովիտ շուշանի»²⁹:

Ներսէս Շնորհալու «Այսաւր ցընծան դասք հոգեղինացն...» սկզբնատողով տաղը գրուած է Գրիգոր Նարեկացու «Աւետիս մեծ խորհրդոյ» տաղի նմանողութեամբ: Տաղերն ունեն տողերի նախադաս յարակրկնութեան նոյն ձեւը. Նարեկացու «աւետիս»-ը Շնորհալին փոխարինել է «այսաւր»-ով, իսկ բովանդակութեամբ գրեթէ չեն տարբերում: Այդ է պատճառը, որ որոշ ձեռագրերում Նարեկացու «Աւետիս մեծ խորհրդոյ» տաղը հանդիպում է Շնորհալու անունով. «Աւետի՛ս, երկրպագէր մեծ Կարապետն Յովհաննէս... / Աւետի՛ս քեզ, Կարապետ, ձայն բարբառոյ յանապատէ... / Աւետի՛ս Յորդանանու»³⁰, «Այսաւր խայտայ ձայն բարբառոյն՝ / Որպէս երբեմն յորովայնին, / Այսաւր ցընծայ մեծ Կարապետն՝ / ԶԱստուած եկեալ տեսանելով / Այսաւր գոչէ յանապատէ. / – Ձեզ աւետիք, որք յԱդամայ...»³¹:

դ. Ասագ Ուրբաթին նուիրուած՝ Գրիգոր Նարեկացու աղօթքները եւ Ներսէս Շնորհալու տաղը. Աստուածաշնչեան իրողութիւններն անմիջականօրէն

²⁷ Այս մասին մանրամասն տես Ա. ՔԵՐԵԿԵՐԵԱՆ, «Ներսէս Շնորհալու նորայայտ տաղերի եւ հատուած–տաղերի մասին», «Ներսէս Շնորհալի» (Յօդուածների ժողովածու), էջ 139–167:

²⁸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Գանձտետր, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԲ., Ժ. դար, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս–Լիբանան, 2008, էջ 651–652:

²⁹ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Տաղեր եւ գանձեր, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., էջ 738:

³⁰ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Տաղեր, տեքստի թարգմանութիւնը, ներածականն ու ծանոթագրութիւնները՝ Ա. ՄԵԹԱՐԵԱՆԻ, Երեւան, 1957, էջ 74–76:

³¹ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Տաղեր եւ գանձեր, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., էջ 703:

մասնակցում են Նարեկացու եւ Շնորհալու երկերի ստեղծմանը՝ հաստատելով հեղինակների մտքերը³²։ «Մատեան»-ի Լէ., Հէ. Բաները նուիրուած են Մեծ կամ Աւագ ուրբաթին՝ Յիսուսի խաչելութեան օրուայ խորհրդին։ Աւագ ուրբաթ օրուան նուիրուած աղօթքներում Գրիգոր Նարեկացին նիւթ է դարձնում մատնութեան գիշերուայ եւ խաչելութեան օրուայ առանձին դրուագներ։ Խաչելութեան տեսարանի դրուագները նա տալիս է ըստ աւետարանիչների՝ անուղղակի յարասութեամբ³³. «Ոչ յարժաթոյն կրկնակապէն կաշառած գութին, / Որ ի գանձարանէ Հաւր Քում նուիրաց / Քեզ գրաւ մատնութեան եւ անարգութեան մասնաւորեցին, / Զուրացողացն մոլեգնելոց, / Ըստ հին հարուածոց հանոյն Մովաբու» («Մատեան», Բան ԼԶ., էջ 397)։ Նոյն բովանդակութեամբ են յօրինուած Շնորհալու մի քանի տաղեր, որոնցից «Ողբ Մեծի ուրբաթին ի Ներսիսէ կաթողիկոսէ Հայոց» տաղը զրոյց է Աստուածամօր ու նրա Որդու միջեւ. «Մեղս ոչ արարեր մարմնով / Ըստ նախաձայն Բանին, / Եւ ոչ նենգութիւն գլտաւ / Ի բերան քո բարի»³⁴։

Ե. Գրիգոր Նարեկացու անդրադարձը Սողոմոնի գործերին եւ Ներսէս Շնորհալու՝ Սողոմոնի առակներին նուիրուած խրատատիպ գործերում Ներսէս Շնորհալին դարձեալ նախօրինակ ունի Գրիգոր Նարեկացուն, որ «Մատեան»-ի Կ., ԽԸ. Բաներում ընդարձակ յարասութիւն-մեկնութիւններով, խորհրդածութիւններով անդրադառնում է Սողոմոն թագաւորին վերագրուող աստուածաշնչեան գործերին։ Դրանք, յենուելով Սողոմոնի կերպարի եւ Սաղմոսների ու Յոբի գրքի մեկնութիւնների վրայ, մեծացնում են այդ երկերի յուզական տարերքը՝ բացայայտելով մարդու հոգեկան աշխարհը։

Գ. ԲԱՌԱՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԷԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ

ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Նորաբանութիւններ. Շուրջ երեքուկէս հարիւրամեակ գրեթէ բոլոր յայտնի ու անյայտ հայ մատենագիրները (Գրիգոր Մագիստրոս, Արիստակէս Լաստիվերցի, Յովհաննէս Իմաստասէր, Սամուէլ Անեցի,

³² Ա. ՄԱՌՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 163–184, ժ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոէմի եւ սաղմոսների առնչութիւնները, Ս. էջմիածին, 1997։

³³ Այս մասին մանրամասն տես «Մատեան», էջ 1045, ծնթ. 1, էջ 1095, ծնթ. 1։

³⁴ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Տաղեր եւ գանձեր, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. գար, Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., էջ 730։

Մխիթար Գօշ, Ներսէս Լամբրոնացի, Ներսէս Շնորհալի եւ այլն) կրել են Գրիգոր Նարեկացու լեզուական ազդեցութիւնը՝ օգտուելով ոչ միայն նրա ստեղծած բառերից, այլեւ բառաստեղծման արուեստից³⁵։ Նարեկացին չի գոհացել նոյն բառի գործածութեամբ եւ ստեղծել է դրա նոր հոմանիշն ու իմաստային նոր կիրառութիւնը (անխորտակելի, անմութելի, անպտական, անստելի, անջնջելի, աշխատակիր, անօրինակ, շնորհրնկալ, բարեկօն, երկնընթաց, քախծական, լուսատիպ, հրաբերան, մշտանուէր, յերկարաձգութիւն, յուսակտուր, յօղատրական, յոգնանկար, ունկնախից, փայլակնամամ, փաղցրունակ)։ Նարեկացիական այս սկզբունքով յօրինուած բազմաթիւ բառեր ու արտայայտութիւններ են հանդիպում Շնորհալու երկերում. «Քոյիմաստեղծ պատկերիս փշումն կրկին / Ի շունչ նորոգման լուսաւորութեան մաքրական շնորհի՜ / Զամենամեղս ոգի պաշտպանեալ» («Մատեան», Բան ԶԲ., էջ 580) // «Քոյիմաստեղծ պատկերին ի խնդիր նորոգման, / Գտեալ ի բնակ մաքուր կուսութեան հոգւոյդ տաճարի»³⁶։ «Մատեան»-ի ՂԳ. Բանն ունի՝ «Աղաւթք թարգմանաւրէն վասն սրբալոյս իւղոյն միտոնի» վերնագիրը («Մատեան», էջ 619), Շնորհալին «Քարոզ ձայնիւ Յաւետարանին, Տեառն Ներսէսի» ստեղծագործութեան մէջ կիրառել է Նարեկացու եւ բառը, եւ արտայայտութիւնը. «Սրբալոյս այս իւղոյ մեռոնիւ աւծելոց»³⁷։

բ. Տաղաչափական ձևեր ու միջոցներ. Ներսէս Շնորհալու գանձերի քննութիւնը բացայայտում է, որ հեղինակն այդ բանաստեղծութիւններն ստեղծել է Գրիգոր Նարեկացու համանուն ստեղծագործութիւնների նմանութեամբ՝ ազատ չափով եւ անյանգ։ Շնորհալին, շարունակելով Նարեկացուց եւ Մագիստրոսից սկզբնաւորուած որոշ աւանդներ, կանոնաւորել է հայերէնի տաղաչափութիւնը եւ ստեղծել որոշակի ոտանաւորով յօրինուած ամբողջական գործեր՝ այդ կերպ բարձրացնելով հայ բանաստեղծութեան երաժշտականութիւնը³⁸։ Նարեկացուց են սկզբնաւորուել եւ Շնորհալու երկերում զարգանալով տարածուել աղօթքի ու բանաս-

³⁵ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. ՄԻՐՋՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 272։ Գրիգոր Նարեկացու նորաբանութիւնների մասին մանրամասն տե՛ս նաեւ Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Գրիգոր Նարեկացու լեզուն եւ ոճը, Երեւան, 1975, էջ 40–77, Հ. ՄԻՐՋՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 163–211։

³⁶ Տե՛ս ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Տաղեր եւ գանձեր, էջ 290։

³⁷ Անդ, էջ 329։

³⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Վ. ՆԵՐՍԻՍԵԱՆ, «Ներսէս Շնորհալու պոէտիկայի մի քանի հարցեր», «Ներսէս Շնորհալի» (յօդուածների ժողովածու), էջ 157–167։

տեղծութեան համակցման՝ համադրական աղօթքի ժանրային առանձնայատկութիւնը³⁹, բանաստեղծութեան էական յատկանիշներին՝ հանգիստութեան, նոյնայանգութեան, անուանակապի գործածութեան եւ այլ դրսեւորումները:

Նարեկացին հանգիստութեան մեծագոյն եւ անգերազանցելի վարպետ է: Նա առաջին անգամ եւ աննախընթաց կերպով հասկացաւ դրա նշանակութիւնն ու լայնօրէն օգտագործեց այն՝ բանաստեղծական խօսքը դարձնելով յոյժ երաժշտական ու ներգործուն⁴⁰: Հանգիստութեան տեսակներին՝ բաղաձայնոյթի եւ առձայնոյթի կիրառութեամբ են առանձնանում «Մատեան ողբերգութեան» եւ «Ողբ Եղեսիոյ» երկերը. «...այլ ընդ ծագս տիեզերաց եւ ընդ ծիրս եզերաց, ի ծոցս ջուրց բազմութեան ծովուց» («Մատեան», Բան ՂԲ., էջ 616) // «Ծովն ի միջի իմ ծածանէր, քաղցրիկ աւդովն ծիծաղէր»⁴¹:

Նոյնայանգութեան ամենաուշագրաւ հատուածը «Մատեան»-ի ԻԶ. Բանն է, որի 21–84-րդ տողերը հեղինակն աւարտել է նոյն ի յանգով՝ «...որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն» («Մատեան», Բան ԻԶ., էջ 344). «Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ճեպով մեծաւ ի տուփի, / Ես ապիկարս՝ մատնեալ անարժան գործովքս յիրաւի, / Վատնիշ արքունի գանձուց՝ կրկնադատ եւ անթափելի / Պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի, / Բիւր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի» («Մատեան», Բան ԻԶ., էջ 345): Շնորհալին «Յիսուս Որդի» երկի բոլոր տողերն աւարտում է իմ յանգով. «Բարձ ի յուսոյդ բարձաւդ խաչին, / Հանցես ի վեր գանկեալ հոգին / Ուրախացո՛ղ զաւրսն վերին՝ / Վասն միոյ մեղաւորին» («Յիսուս Որդի», էջ 296):

Նարեկացին գործածել է նաեւ դերբայական եալ յանգը. «Զանգուածն հանդերձանաց՝ մահացու կրիւք շաղախեալ, / Զգայութիւն սրտին իմաստից՝ խեթիւ խոցոտեալ, / Ակնկալութիւն բարեացն՝ բնաւին բարձեալ» («Մատեան», Բան ԻԳ., էջ 332): Շնորհալու «Վիպասանութիւն նախնի՝ ըստ Հոմերի սկսեալ ի վերուստ» երկի բոլոր տողերը վերջանում են եալ յան-

³⁹ «Մատեան»-ի ժանրային առանձնայատկութեան մասին մանրամասն տես Ն. ԹԱՄ. ԲԱԶԵԱՆ, Նարեկեան դպրոցը, էջ 124:

⁴⁰ Տես ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, Մատեան ողբերգութեան, գրաբարից թարգմանեց Մ. ԽԵՐԱՆԵԱՆ, Երեւան, 1960, էջ XXXIII:

⁴¹ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Ողբ Եղեսիոյ, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., էջ 168:

գող. «Աստանա՛ւր սկզբնաւորեալ, / Բանիս զԲանն սկիզբն եղեալ, / Այն, որ ընդ Հաւրն է էացեալ, / Անեղապէս գողով ծնեալ»⁴²:

Անձինքի եւ դրա տարատեսակի, յատկապէս՝ անուանակապի առաջին կիրառողը դարձեալ Նարեկացին է: Այդ ձեւով գրուած տաղերում ու գանձերում նա ունի «Գրիգորի երգ», «Գրիգորի է երգս այս» ծայրանունը: Շնորհալու բազմաթիւ բանակապեր էլ յօդում են «Ներսէսի է երգ», «Ներսէս Հայոց կաթողիկոս», «Ներսէսի է բանս այս» բառերը: Այս եւ նմանատիպ օրինակներում Շնորհալին ոչ միայն զարգացրել է Նարեկացու տեսական ըմբռնումներն ու բանաստեղծական արուեստի առանձնաշատկութիւնները, այլեւ յաճախ հիմնել է դրանց նոր տեսակներ ու կիրառութիւններ:

Այսպիսով՝ ազդեցութիւնների ու զարգացումների այս վերընթաց ուղին շարունակելի է եւ կարիք ունի հանգամանալից ուսումնասիրութեան: Նշուած փաստերը, բնագրային համեմատութիւններն ու վերլուծութիւնները ցոյց են տալիս արեւելաքրիստոնէական ու նորալատոնական փիլիսոփայութեան էական նշանակութիւնը, ճիւղաւորումներն ու զարգացումները Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան մէջ, որոնք կարելոր սկզբնաղբիւր էին նաեւ Նարեկեան դպրոցի համար: Նարեկեան դպրոցում Ժ.—ԺԱ. դարերում ձեւաւորուած տեսական ու ստեղծագործական մեծ ժառանգութիւնը, սակայն, շուրջ մէկ դար անյայտ էր մնացել: Եւ միայն Կիլիկիայում ԺԲ. դարում Նարեկեան դպրոցի աւանդոյթի շարունակութիւնն է դարձել Կիլիկեան դպրոցը, իսկ դպրոցի նշանաւոր մատենագիրները՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան վերհանողներն ու վերալայտնաբերողները: Այդ դպրոցի մատենագիրներից Ներսէս Շնորհալին Գրիգոր Նարեկացու գրական ժառանգութեան ամենաակնառու շարունակողն է: Նա ոչ միայն կրկնում է Նարեկացուն կամ կրում նրա ազդեցութիւնը, այլեւ պահպանում եւ տարածում է նրանից սկիզբ առած բանաստեղծական արուեստի էական յատկանիշներն ու Նարեկեան դպրոցի տեսական հայեացքները՝ զուգահեռ սեփական ստեղծաբանութեանը:

* * *

Եթէ չլինէր Գրիգոր Նարեկացին եւ նրա «Մատեան ողբերգութեան» երկը, չէր լինի Ներսէս Շնորհալին եւ նրա ստեղծագործական ժառան-

⁴² ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԱԼԻ, Վիպասանութիւն, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., էջ 73:

գուծիւնը: Եթէ չլինէր Ներսէս Շնորհալին, այնքան հասկանալի չէր լինի Գրիգոր Նարեկացին: Այլ ժամանակաշրջանում, այլ միջավայրում Ներսէս Շնորհալին իր երկերի միջոցով ցոյց է տալիս Գրիգոր Նարեկացու մտածողութեան բարդ, դժուարընկալելի աշխարհի պարզ կողմը, ընթերցողի եւ ուսումնասիրողի համար մեկնում է աղօթքի նարեկացիական հայեցակարգը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Նարեկեան դպրոց, Կիլիկեան դպրոց, աղօթամատեան, ներքին եւ արտաքին մարդ, մեկնություն, ընդօրինակություն, արեւելաքրիստոնէական գաղտնուսում, աստուածանմանություն:

РЕЗЮМЕ

Представление обзора средневековой армянской литературы требует глубокого исследования теоретических и художественных связей между выдающимися представителями Нарецкой и Киликийской школ. Киликийская школа выступает как преемница традиции Нарека, для которой характерны религиозно-философская система мышления, развитая теология, этика и эстетическое учение. Наиболее яркие представители Киликийской школы – Нерсес Шнорали (XII в.), Григор Тга (XII–XIII вв.) и Нерсес Ламбронати (XIII в.) – были не только продолжателями, но и активными распространителями духовно-поэтического наследия Григора Нарекаци (X–XI вв.).

Особое внимание заслуживают параллели между творчеством Нарекаци и Шнорали, которых уже в Средние века нередко ставили в один ряд. В произведениях обоих мыслителей ключевую роль играет идея духовного совершенствования личности, основанная на представлениях о божественной природе человека (обожении) и на онтологическом осмыслении света. Эти мотивы отражают влияние как неоплатонизма, так и христианской антропологии. С эстетической точки зрения, Нерсес Шнорали во многом опирается на Нарекаци, заимствуя его новаторские метрические формы, поэтические средства и неологизмы.

Краткий анализ данного вопроса показывает, что Нерсес Шнорали не был простым подражателем Нарекаци: он одновременно сохранял и развивал теоре-

тические принципы Нарекской школы, вплетая их в собственное оригинальное творчество.

SUMMARY

A comprehensive overview of medieval Armenian literature requires a detailed investigation into the theoretical and creative connections between the foremost figures of the School of Narek and the School of Cilicia. The Cilician School represents a direct continuation of the tradition established by the Narek School, which is distinguished by its religious-philosophical system of thought, theology, ethics, and aesthetic doctrine. The most prominent chroniclers of the Cilician School—Nersēs Shnorhali (12th c.), Grigor Tgha (12th–13th cc.), and Nersēs of Lambron (13th c.)—were not only key representatives but also active disseminators of the spiritual and poetic legacy of Gregory of Narek (10th–11th cc.).

Remarkably close points of intersection can be found in the exceptional literary achievements of Gregory of Narek and Nersēs Shnorhali—two figures who were already regarded as spiritual and poetic counterparts during the Middle Ages. In the works of both authors, considerable attention is devoted to the theme of spiritual perfection, drawing upon concepts advanced by earlier Church thinkers. Their writings frequently reference the deification of man, his divine nature, and an ontological perception of light, all of which reflect the influence of both Neoplatonic and Christian worldviews.

From the standpoint of poetic form and the art of verbal expression, Nersēs Shnorhali drew substantial inspiration from Gregory of Narek. This is evidenced by his adoption of Narekatsi's innovative metrical systems, stylistic devices, and neologisms. A concise analysis of the subject reveals that Nersēs Shnorhali was not a mere imitator of Gregory of Narek, but rather preserved and transmitted the theoretical principles of the Narek School and the poetics of Gregory's work alongside the development of his own original literary voice.

